Ա.

Գերապատիւ Տեառն Տեառն Ստեփաննոս վարդապետի և Աբբայ հօր մերում խնդալ ի քրիստոս

... Զսոսկալի և զահագին գետնաշարժէ, որ եղև աստ....... ես զմասնաւոր ինչ գրեցից...: Նախ լուաք թէ ի կողմանս Իզնիմիտոյ ուռուցեալ ուրեք երկիր պատառեցաւ ի միոյ կողմանէ. և ջուր ժահահոտ իբրև զգետ յորդեալ խաղաց: Լուայ ես թէ ի Իւսկիւտար ի դաշտի յարածիլ իւրեանց, պատառեալ երկիր եկուլ զ15 երիվարս: Ի կողմանս Վլանկայու կաթնավաճառ մի ընդ անցանիլն՝ ձիով հանդերձ մնաց ընդ փլածով պատի, և մեռաւ: Իսկ եթէ չարչըի քարաշէն կրպակաց խաներուն, պէզէստէնին և մեծամեծ ապարանից և մզկթաց, այսինքն ճամիից հանդիպեալ վնասն, ոչ գրչաւ և ոչ լեզուաւ հնար է պատմել: Միայն վասն չարչըի և այլ որ ինչ յարքունուստ պարտ է շինիլ 36000 քսակ թահմին եղև:... Յառաջ քան զաւուրս ինչ եղև անց[ր]և սաստիկ ի խալաթեայ և ի կոստանդնուպօլիս, և զի պախճէ խաբուսուին դրան անցք փակեալ էր յաւերածոց, դիզացաւ ջուրն աւելի քան զկանգուն մի ընդ ճանապարհս. 2 երիվարք և այր մի խեղդեցան: Իսկ ի յօրթագեղ յաւուր յայնմիկ ամենևին ոչ տեղեաց անձրև: Բայց յաւուրն երկրորդի նոյն յորդութիւն անձրևոյ եղև ի յօրթագեղ, և ի կոստանդնուպօլիս և ոչ կաթիլ մի անձրևոյ տեղեաց:... օրըստօրէ սաստիկ վնասեալքն յառաջին գետնաշարժէն, փլանին: Վէզիր խանը, զօֆճի խանը, և այլ քանի մի խանք, և սուլթան մուստաֆա ճամիսին գրեթէ հիմնայատակ եղեն. յապարանս թագաւորին ևս ոչ սակաւ վնաս եղև: Եւ այնչափ երկիւղ և սոսկումն անկաւ ի սիրտս մարդկանց մինչև բազմաց ի բազում աւուրս վրանօք ի բացի բնակիլ: Լցան պարտէզք և պօստանք բացօթէիւք:...

Յամի տեառն 1766 — Ն. Ծառայ
յունիս 5 — Հ. Թադէոս վրդ. Մխիթարեան
[Կ. Պոլիս]

ՄԿԱ.

Բ

Գերապատիւ և Գերայարգ Տեառն Տեառն Ստեփաննոս վարդապետի Աբբայ հօր մերոյ ողջոյն աջահամբոյր

... իբրև սկսայ զպատարագն մինչև էի ասացեալ զսուրբ աստուածն, անկարծ ուրեմն անհնարին գոռմամբ երկրի, որոյ ձայնն լսելի լինէր իբրև զձայն որոտման ամպոց, և մառախլապատ խառնակեալ օդոցն առ հասարակ ծածկեաց զտեսութիւն պատուհանիցն իբրև զծուխ լի փոշւով, և սկսաւ թնդալ երկիրն, և ամենայն տունն յորում էաք դողացեալ սասանիւր ի հիմանց իբրև զտերև մի ծառոյ: Յայնժամ թողեալ զպատարագն դարձայ առ ժողովուրդն և խաչակնքեալ ի վերայ նոցա ասեմ մի՛ երկնչիք, և դարձայ անդրէն ի պատարագն, և իբրև տեսի եթէ տակաւին ոչ դադարեցաւ, երկրորդ անգամ դարձայ և արարի նոյնպէս, և տեսեալ թէ ոչ դադարէ, այլ հետզհետէ առաւել ևս զօրանայ շարժումն և դղրդիւնն անհնարին, և այնպիսի շարժէ, զի ի կործանումն է շարժումն, ասեմ ցնոսա մի՛ կայք, ելցուք արտաքս, ասեմ ելէք, այլ նոքա ապշեալ իբրև անշունչ անզգայ ոչինչ իմանան, և ոչ լսեն, ոչ գիտեն թէ ուր են, և զի՞նչ է, և են ուշաթափեալ ամենեքին. և էաք ի փոքրիկ սենեկի անդ աւելի քան զերեքտասան ոգիս: Իբրև տեսի թէ կործանումն է կատարածն շարժմանս այսորիկ ասեմ ցնոսա երթիցուք, և ես չուրջառովն